

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (իրադրային վերլուծություն)

Է. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Այն ժամանակից ի վեր, ինչ սկսվել է Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը, ազգային գոյատևման ուղին իմաստավորող քաղաքական միտքը հայտնվել է խոր ու երկարատև տեղապտույտի մեջ: Աստվածաբանական անապացույց խաբկանքներից ազատագրված հասարակությունը և նրա քաղաքական միտքը դիցաբանական վեհերոտությամբ ու ջղազար պտելությամբ ամեն ինչ մետաֆիզիկական բացասման ենթարկելուց հետո շվար կանգ է առել՝ հիմա ի՞նչ անել: Այսպիսին է տրանսֆորմացիոն հասարակությունների վիճակն ընդհանրապես:

Ետխորհրդային հանրապետությունների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքը առարկայական ու ենթակայական ինչ-ինչ պատճառներով մի հուն է մտել, որը պահանջում է նորովի մեկնաբանել և, առնվազն, վերաիմաստավորել ազգային-պետական գոյատևման կենսափիլիսոփայությունը: Խոսքը ոչ միայն ազգային գաղափարախոսության վերանայման, այլև ազգային ու պետական կյանքը վերանայված գաղափարախոսությանը համապատասխան կանոնակարգել-ճշտելու մասին է: Խոսքը, ի վերջո, ազգային գաղափարախոսության իրացման քաղաքական գործունեության մասին է: Այն գործունեության, որի առյուծմեծերից ելնելով՝ պետության քաղաքացին ընդունում կամ մերժում է կենսագործվող գաղափարախոսությունը:

Տրանսֆորմացիոն հասարակություններում այդ գործունեությունը ծավալվում է երկու ծայրահեղ դրսև որումներով: Քաղաքական գործունեության մեջ ազգային գաղափարախոսությունը մի կողմից մատուցվում է իր մտահայեցողական դրսև որումներով՝ իր մեջ չներառելով ամենօրյա կյանքի համընդհանուր հոգսն ու նրա լուծման կոնկրետ եղանակները: Մինչդեռ միջին ապրումներով օժտված հասարակության մեծամասնությունը ազգային գաղափարախոսությունից ակնկալում է կյանքի առարկայական ու կոտորակված բացատրություն՝ աշխատանք, արդարություն, օրինականություն, ապահովություն և այլն: Մյուս կողմից էլ, գոյատևման կենսաձևը նախապես դնելով «արևմտյան» կամ «համայնավարական» երկրներում առջև, քաղաքագետների ու գաղափարախոսների մյուս թևը նախապատվությունը տալիս է արևմտյան կենսաձևին: Ըստ էության գաղափարական վեճը տեղափոխվում է «ու՜մ նմանվելու» խնդրին: Աճշուշտ, նմանակելը ևս տրանսֆորմացիոն խնդրի լուծման ձև է, բայց վիճակից դուրս գալու արհեստական ու ժամանակավոր ելք, քանի որ ամեն մի ազգային-պետական համակարգ ունի տրանսֆորմացիայի իր առանձնահատկությունները, որոնք նաև բխում են ազգի ինքնությունից: Ավելին, քաղաքական ուժերի այդ թևը, շահարկելով ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը, միջպետական ու ազգամիջյան հակասությունների փաստը, շմանրամասնելով ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի առաջացման ենթակայական պատճառները, ազգայինը դիտելով որպես համաշխարհային քաղաքակրթությունից օտարվելու պատճառ, ազգային գաղափարախոսությունը համարում է ժամանակավրեպ երևույթ:

Պրորբենն այն է, որ քաղաքական հրապարակ նետված տրանսֆորմացիոն խնդիրը և նրա լուծման գաղափարները շատ հաճախ կամ չեն բխում համակարգի էքոնկեցության վիճակից, կամ խիստ մտահայեցողական են: Մեր մտածողությունը դժվարությամբ է ազատագրվում տարիների ընթացքում ձևավորված գաղափարաքաղաքական ստերեոտիպների կապանքներից: Մինչդեռ տրանսֆորմացիայի այդ տարիներին տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական ու քաղաքական լուրջ փոփոխություններ:

Տրանսֆորմացիոն հասարակությունների փորձը ցույց է տալիս, որ անցյալը պարզա-

պես կյանքի ապրված մի ժամանակահատված չէ: Այն աստիճանաբար վերածում է անձի գործառույթի, որից հնարավոր չէ հեշտությամբ ազատվել: Քանն այն է, որ անցյալի վերագնահատման շնորհիվ մարդը ազատվում է իր կենսագրության բեռի մի մասից¹: Հանգամանք, որ տրանսֆորմացիոն հասարակությունը և նրա առանձին անդամներին դարձնում է երկատված: Ինքնին հասկանալի է, որ մարդիկ հեշտությամբ չեն հրաժարվում իրենց կենսագրությունից, և այդ պատճառով էլ, ի տարբերություն սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մտածողության տրանսֆորմացիան ընթանում է շատ ավելի դանդաղ և շատ ավելի հիվանդագին հետևանքներով:

Պատմական հիշողությունը (անցյալ), աղընթեր կենսունակությունը (ներկա) և պատմական հեռանկարը (ապագա) հայ մարդու աշխարհիկ-ազգային կենսափոխադարձության անկյունաքարերն են: Մրանց ամբողջությունը կարելի է անվանել **կենսատնակության հայկական եռանդ**, որի շնորհիվ բարեխղճան աշտարակաշինության համաշխարհային քառսում հայ ժողովուրդը կարողացել է և կարողանում է պահպանել իր ազգային ինքնությունը: Ինքնատիպ ու ինքնիշխան լինելու այդ կենսատնակության եռանդը իր երեք դրսևորումներով 88-ի շարժիչ ուժն էր:

88-ին, երբ ազգային վերածնունդը վերընթաց փուլ էր ապրում, ժողովրդի պատմական հիշողությունը Հայաստանում սկսված տրանսֆորմացիոն գործընթացը դարձրեց **հատուցման համազգային շարժում**: Ընդսմին, հատուցման համազգային շարժումը երկբևեռ էր: Մի բևեռված այն ուղղված էր դեպի դուրս, մյուսով՝ դեպի ներս: Շարժման դեպի դուրս ուղղված թևը արտահայտում էր ազգային գաղափարախոսության պահանջատիրական ուղղվածությունը (պատմական արդարություն), իսկ դեպի ներս ուղղված թևը միտված էր սոցիալ-տնտեսական կյանքում ազգային կենսաձևի վերահաստատմանը (սոցիալական արդարություն): Մրանք էին այն երկու հիմնական տրանսֆորմացիոն խնդիրները, որոնք 1988-ը դարձրին համազգային երևույթ: Մրանք նաև այն երկու հիմնական անկյունաքարերն են, որոնց վրա բարձրանում է հայոց ազգային գաղափարախոսությունը: Այս իմաստով 1988-ը ազգային **գաղափարախոսության վերածնունդի շարժում էր**: Չբացառելով ժողովրդական լայն շարժումներ հրահրող քաղաքական սցենարների (բեմագրություններ) ու անդրկուլիսյան խաղերի հնարավորությունները, առավել ևս, որ ժամանակակից աշխարհում այդ նպատակով ստեղծված են բացահայտ ու գաղտնի գործող բազմաթիվ ֆուտուրոլոգիական ու հետազոտական այլ կենտրոններ, այնուամենայնիվ, առանց խորքային շարժատիքների ոչ մի շարժում համազգային բնույթ չի ստանում:

Ինչպես ամեն մի շարժում ու գործունեություն, ազգային շարժումները ևս չբավարարված որոշակի նյութական ու հոգևոր համազգային պահանջումքների արդյունք են:

Այդ պահանջումքների առաջին խումբը, հետևելով ամերիկյան հայտնի հոգեբան Ա. Մասլոուի² ձևակերպմանը, կարելի է անվանել քաղաքական չբավարարված ազգային «էքզիստենցիալ պահանջումքներ» (պատմական հայրենիք, ազգային պետականություն, ազգային կենսաձև և այլն): Այդ պահանջումքների քաղաքական բավարարումը ինքնին ենթադրում էր, որ տրանսֆորմացիոն գործընթացը հատուցման պահանջներ է առաջադրելու: Այլ կերպ հնարավոր չէր ազգային գաղափարախոսության վերածնունդը: Դեպի դուրս ուղղված պահանջումքները շարժմանը տվեցին ազգային-ազատագրական բնույթ, դեպի ներս ուղղվածները՝ սոցիալ-քաղաքական: Ազգային ինքնությունը քաղաքական կազմակերպման ենթարկելու էքզիստենցիալ-գաղափարական հիշյալ պահանջումքներն էլ հենց ապահովեցին տրանսֆորմացիայի ազգային ուղղվածությունը:

Անկախ պետականության ձևավորման առաջին շրջանում հայ ժողովուրդը ընդունեց հասարակական համակարգի արմատական տրանսֆորմացիայի, քաղաքական ու սոցիալ-տնտեսական մակրոհեղափոխական վերափոխումների հայեցակարգը՝ հույսով և համոզմունքով, որ կստեղծվի ազգի քաղաքական կազմակերպման այնպիսի ձև (ազգային պետականություն), որը ոչ միայն կստանձնի «ներքին հայրենիքի» (պատմական հիշողություն, լեզու և այլն) և «միկրոհայրենիքի» (անձ, ընտանիք և այլն) պաշտպանության գործառույթը, այլև դրանց հիմքի վրա և դրանց բովանդակությանը համապատասխան կստեղծվի պետական հայրենիք: Այլ կերպ ասած՝ հայ ժողովուրդը ազգային գաղափարախոսությանը համապատասխան ազգային կենսաձևի քաղաքական կազմակերպման ու կարգավորման գործառույթները կամովին հանձնեց իր նոր-նոր ձևավորվող պետությանը: Հայ ժողովուրդը հայրենիքը մերժող համայնավարական գաղափարախոսության մամլիչի տակ չձգմվելու համար ստեղծել էր «ոչ իրավական ազգային պետություն» (գաղափարականացված ներ-

¹ Տե՛ս **А. Н. Леонтьев, Деятельность и личность. В кн.: Психология личности, Т. 2 (Хрестоматия). Самара, 1999, էջ 191-192:**

² Տե՛ս **A. Maslow, Motivation and personality. N. Y., 1970:**

քին հայրենիք) և 1988-ը դիտեց որպես **ճեքքին հայրենիքը օրինականացնելու** նախերգանք: Այն, ինչ կատարվեց 1988-ի ինքնաբուխ և հուզական խորապատկերի վրա, կարելի է անվանել ազգային **գաղափարախոսության պետականացման** փառահեղ ու բացառիկ երևույթ: Նաև՝ պատմության համար բացառիկ այն դեպքերից, երբ մի ամբողջ ազգ իր ազգային կենսափիլիսոփայության մասունքները **օժտվ** է պետականորեն: Մնացածը, ինչ կատարվեց երրորդ հանրապետության ստեղծման ճանապարհին, պատմությունը կմոռանա:

Բայց համակարգի տրանսֆորմացիոն գործընթացներին հայ ժողովուրդը մասնակցեց նաև մեկ այլ կարգի քաղաքական պահանջմունքներ բավարարելու ակնկալիքով: Պահանջմունքների այդ խումբը կարելի է անվանել չբավարարված անդրազգային-էքզիստենցիալ պահանջմունքներ (ժողովրդավարություն, քաղաքացիական հասարակություն, ազատ ձեռներեցություն, մարդու իրավունքներ և այլն): Այն փաստը, որ վերոհիշյալ երկու խումբ պահանջմունքները քաղաքական բնույթ ունեին, կարևոր հանգամանք է: Դա հաստատում է, որ 1988-ը ոչ թե քաղցած ու վիրավորված ամբոխի բուռն-ապստամբություն էր, այլ ազգային ազատագրական ու քաղաքացիական ուղղվածություն ունեցող տրանսֆորմացիոն շարժում:

Այս փաստից բխում է երկու կարևոր տեսական ու քաղաքական եզրակացություն: Առաջին՝ համակարգի տրանսֆորմացիայի խնդիր դրած ժողովուրդը հասարակական կյանքի զարգացման հետագա ուղղության, տրանսֆորմացիոն պրոցեսների տերն է դառնում թե բարոյական տեսանկյունից և թե, առավել ևս, իրավականորեն: Երկրորդ՝ անօրինական է դարձնում բոլոր այն քաղաքական գործողությունները, որոնք չեն բխում տրանսֆորմացիայի գաղափարական հիմքերից և ամեն ինչ հանգեցնում են առընթեր պրագմատիկ նպատակների: Ինչ խոսք, պրագմատիզմը (գործնապաշտություն) քաղաքացիական հասարակության և շուկայական տնտեսության բնորոշ հատկանիշներից մեկն է: Վտանգավորն այն է, որ այն հասարակական հարաբերությունների կարգավորման ու գործառնության ձևից կարող է վերածել կենսափիլիսոփայության՝ հակադրելով անձնականն ու ազգայինը: Չմոռանանք, որ տրանսֆորմացիոն շարժում հարուցած ազգային ու անդրազգային էքզիստենցիալ-քաղաքական պահանջմունքները իրենց բնույթով համակարգային էին և չէին շոշափում ոչ մի առանձին վերցրած որոշակի մարդու որոշակի այսկողմյան-գործնապաշտ շահերը: Դրանք միայն ենթադրվում էին:

Ի տարբերություն խորհրդային շատ հանրապետություններում սկսված տրանսֆորմացիոն շարժումների, տրանսֆորմացիայի ժողովրդական պատկերացումների հայկական բնորոշ շատ ավելի անանձնական էր և այլ իսկ պատճառով՝ խորհրդային մյուս հանրապետությունների համար անընդօրինակելի:

Խորհրդային հանրապետություններում տրանսֆորմացիոն գործընթացի ժողովրդական պատկերացումների օբյեկտը անձնավորված էր, շարժառիթները՝ սոցիալականացված: Նրանք տնտեսական բարեփոխումների պահանջից գնացին քաղաքական անկախության և ազգային ինքնիշխան պետության պահանջներին: Մինչդեռ Հայաստանի պարագայում որոշիչը ազգայինն էր ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի իր դրսևորումներով, այլև ազգային պետականություն ունենալու և այն Պահանջատիրության նպատակ ու միջոց դարձնելու համոզվածությամբ: Նկատենք միայն, որ անանձնական այդ շարժառիթները խիստ հուզական էին և հեշտ կառավարելի:

Ինչպես արդեն նշվեց, տրանսֆորմացիոն գործընթացներին զուգահեռ հանրապետության քաղաքական կյանքում ձևավորվեցին երկու հիմնական գաղափարախոսական ուղղություններ՝ ազգային-ավանական և ուլտրա-պրագմատիկ (գերգործնական): Այդ երկու հիմնական ուղղություններին բնորոշ ու ընդհանուր է հուզականացվածությունը: Ինչ խոսք, գաղափարախոսության զանգվածայնացման համար հուզականացումը կարևոր պայման է: Բայց ամբողջ հարցն այն է, որ դրանք այդպիսին են ոչ թե զանգվածային նկատառումներով, այլ էությանը՝ առաջին դեպքում շարժիչ ուժ դարձնելով ազգային հավաքական արժանապատվության զգացումը, երկրորդ դեպքում՝ բացառիկ անհատական ձեռներեցությամբ օժտվածությունը:

Տրանսֆորմացիոն գործընթացների առաջին փուլում հուզականացված գաղափարախոսությունն արդեն իսկ անհրաժեշտ ու բավարար պայման էր զանգվածների քաղաքական ակտիվության բարձրացման համար: Բավական էր, որ հրապարակ նետված գաղափարն արտահայտեր հայոց նվիրական իդեոլոգիան (պետական անկախություն) և պաշտպաներ տրանսական ազատականության (անձնական անկախություն) գաղափարը, որպեսզի ժողովուրդը քաղաքական կամք դրսևորեր: Ըստ էության, 1988-ի շարժիչ ուժը ավելի շուտ գաղափարական իդեալներն էին և ոչ այնքան այդ իդեալների իրագործման որոշակի մեխանիզմները: Այդ իմաստով Հայաստանում տրանսֆորմացիոն գործընթացների առաջին փուլը աչ-

քի էր ընկնում **ազգային հուզական համախմբվածությամբ**: Այսօր վստահությամբ կարելի է ասել, որ այդ փուլում ստեղծվել էր նմանը չունեցող համազգային հուզական դաշինք: Եվ որքան էլ պարադոքսալ հնչի, այդ դաշինքը հնարավոր դարձավ այն պատճառով, որ նրա հենքը զգացմունքային-գաղափարախոսական էր և ոչ թե քաղաքական-գաղափարախոսական: Մարդկանց ավելի շատ համախմբում էր զգացմունքային պարտավորվածությունը, քան քաղաքական: Դա էր պատճառը, որ ազգի գրեթե բոլոր սոցիալական խավերն ու շերտերը, առանց փոխադարձ պայմանավորվածության ու պարտավորվածության, մտան համազգային դաշինքի մեջ: Բայց զգացմունքային հասարակությունը, եթե այն հետագայում չի կազմակերպվում որպես ռացիոնալ հասարակություն, վաղ թե ուշ կարող է դառնալ աղընթեր ժամանակի և նրա բարձրացրած պրոբլեմների պատանդը³:

Այս փուլի մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ տրանսֆորմացիայի գաղափարական առանցքը վերացական-համազգային էր և չէր ընկալվում որպես առանձին-որոշակի մարդու տեղի, դերի, սոցիալական կարգավիճակի հնարավոր ու շոշափելի փոփոխությունների շարժում: Եվ եթե ենթադրում էր, ապա միայն լուսավոր ռոմանտիզմի (վիպապաշտություն) տեսանկյունից: Քանի դեռ անկախ պետականության և Պահանջատիրության գաղափարներն ընկալվում էին ազգային արժանապատվության տեսանկյունից, գործում էր նաև զգացմունքային համերաշխության դաշտը: Ըստ էության, այդ դաշտի հիմքում ընկած էր նախկին սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերին ընդդիմանալու գաղափարը: Այն համերաշխության դաշինք էր «ընդդեմ»: Ինչ խոսք, ցանկացած տրանսֆորմացիոն շարժում ենթադրում է «ընդդեմ» ուղղվածություն: Բայց տրանսֆորմացիոն քաղաքական ու սոցիալ-տնտեսական պրոցեսները առաջին հերթին պետք է ունենան «համուժ» ուղղվածություն: Ազգը և նրա քաղաքական ուժերը գաղափարախոսություն են մշակում ոչ թե և ոչ այնքան ընդդեմ մեկ այլ գաղափարախոսության, այլ այն իրագործելու և ազգային կյանքը այդ գաղափարախոսության ոգուն համապատասխան քաղաքական կազմակերպման ենթարկելու նպատակով: Բայց որպեսզի ազգային կյանքը զարգանա, գործառնի ու վերարտադրվի ազգային գաղափարախոսության պահանջներին ու բովանդակությանը համապատասխան, անհրաժեշտ է լուծել գաղափարախոսության ներազգայնացման խընդիրը: Բանն այն է, որ ցանկացած հասարակություն կարող է գոյություն ունենալ այնքանով, որքանով նրա անդամները հասկանում, ընդունում և պաշտպանում են միանման գաղափարներ ու նպատակներ⁴:

Ցանկացած գաղափարախոսություն գործում ուժ է դառնում միայն այն ժամանակ, երբ ազգի ու պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային ու բարոյահոգեբանական կյանքում կարգավորիչ գործառույթ ունի: Այս տեսակետից ազգային գաղափարախոսության ներազգայնացման արդի փուլը կանգնած է երկու հիմնական խնդիրների առաջ: Առաջինը՝ **գաղափարախոսությունը կրող սոցիալական հենքի գործունեական առանձնահատկությունների հստակեցում**, երկրորդ՝ **ազգի գործունեական առանձնահատկություններին համապատասխան գաղափարախոսության որոշակիացում-առարկայնացում**:

Ասենք նաև, որ ազգային գաղափարախոսության հիմնահարցերը (անկախություն, պահանջատիրություն, լեզու, մշակույթ, բարքեր, սոցիալական արդարություն և այլն) գրեթե ցանկացած ազգին բնորոշ հատկանիշներ են: Տարբերությունը ի հայտ է գալիս այդ գաղափարները որոշակի գործունեության ծրագիր դարձնելիս: Այս դեպքում է, որ առաջին պլան են մղվում կոնկրետ ազգի և նրա կոնկրետ անհատների գործունեական առանձնահատկությունները: Փորձենք այս տեսանկյունից պարզել հայ ազգային գաղափարախոսության կրող սոցիալական հենքի գործունեական առանձնահատկությունները:

Իր ողջ պատմության ընթացքում հայ ժողովուրդը փաստորեն չի անցել աշխարհի արևելյան ու արևմտյան մասերում դրսևորված դասական հասարակարգերի լրիվ ու ամբողջական փուլերը: Հայաստանում չի եղել ոչ դասական ստրկատիրություն, ոչ դասական ավատատիրություն, ոչ էլ կապիտալիզմ: Նույնիսկ համայնակարների շրջանում Հայաստանում սոցիալիզմի համայնակարական մոդելը (բնորոշ) ազգայնացված էր: Դրա համար իրոք կային գուտ ազգային հանգամանքներ: Անհատականությունն ու անհատական մասխաձեռնության հայկական խառնվածքը չէր կարող տեղավորվել աղքատ հասարակության բռնապետական գաղափարախոսության կապանքների մեջ: Մյուս կողմից՝ հայ ժողովրդի քանակական կազմը, արյունակցական-ազգակցական գրեթե համընդգրկուն ցանցը հնարավորություն չեն տալիս դրսևորվելու ներազգային օտարման անհատական մղումներին:

³ St'u П. Сорокин. Человек. Цивилизация. Общество. М., 1992, էջ 470:

⁴ St'u В. В. Крайник. Социально-психологический механизм политической власти. В кн: Психология и психоанализ власти. Т. 1. Самара, 1999, էջ 257:

Այսինքն՝ հայ ժողովրդի գոյատևման կենսածևը մշտապես հավասարակշռվում է անհատականության և համայնքավարության չափավոր հակադրությամբ: Այդ հակադրության չափավորությունը կարգավորվում է ներազգային հարաբերությունների կառավարման **պատասխանատու-կախվածության** ազգային հոգեբանությամբ: Ունենալով այլ ազգերին բնորոշ սոցիալական շերտավորման բնական դրսևորումներ՝ հայ ժողովուրդը իր գոյատևման գերխնդիր հրամայականով ապրել է համայնքի և նրա առանձին անհատի ճակատագրի պատասխանատու կախվածության գիտակցությամբ՝ թե արտաքին ուժերին դիմակայելու և թե ներքին դժվարությունները հաղթահարելու համար:

Պատահական չէ, որ հայ ժողովրդի դարավոր կենսավորձի մեջ սոցիալական շերտավորումը երբեք չի դարձել դասակարգային պայքարի գաղափարախոսության նախապայման: Պատահական չէ նաև այն, որ այսօր՝ «գոյության կոլի»՝ նատուրալիստական ապրելակերպի պարագայում անգամ, ներազգային կայունության պահպանումը մնացել է համազգային խնդիր: Դա նշանակում է, որ գոյատևման հայկական կենսածևին բնորոշ է ազգային համերաշխությունն ու ինքնությունը: Այս հանգամանքի գիտակցումը խիստ կարևոր է, քանի որ տրանսֆորմացիոն փուլ մտած Հայաստանում դեռևս իշխում է ապրելակերպի այս կամ այն կենսածևի ընդօրինակման քաղաքական մտայնությունը: Եթե դարերի ընթացքում հայ ժողովուրդը վարեր գոյատևման մեխանիկական ընդօրինակման քաղաքականություն, դժվար թե կարողանար հասնել արդի քաղաքակրթությանը: Ինչ խոսք, անհնար է անհաղորդ մնալ արդի քաղաքակրթության նվաճումներին, այդ թվում նաև հասարակական կյանքի կազմակերպման բնագավառում: Հայ ժողովուրդը միշտ էլ բաց համակարգ է եղել և կարողացել է ժամանակին արձագանքել քաղաքակրթության առաջընթացին: Բայց կյանքը բազմիցս հաստատել է, որ ոչ մի ազգ չի կարող մեխանիկորեն ընդունել որևէ գաղափար և իր կենսածևը արհեստականորեն հարմարեցնել դրան: Գաղափարները կենսունակ են, եթե ունեն համապատասխան ազգային կեցություն: Ազգը քաղաքակրթության չափ «արհեստականացված» լինելով հանդերձ՝ բնական օրգանիզմ է՝ իրեն բնորոշ ինքնապահպանման սոցիալական, մշակութային, կենսաբանական ու գործունեական ազգային մեխանիզմներով: Հարց է ծագում. հնարավոր է արդյոք տրանսֆորմացիայի ենթարկել նաև ազգային ինքնությունը (լեզու, դավանանք, պատմական հիշողություն, ազգային արժանապատվություն և այլն): Զննարկելով, օրինակ, Ռուսաստանում ընթացող տրանսֆորմացիոն պրոցեսներն ու «ազգային գաղափարի» շուրջ քաղաքական իրարամերժ տեսակետները՝ Գ. Վ. Օսիպովը գտնում է, որ արևմտյան քաղաքակրթության շրջանակներում անհրաժեշտ է ամեն գնով պաշտպանել ոռու ազգի ինքնության հիմնական գաղափարները: Ըստ նրա, ճգնաժամից կարելի է դուրս գալ համաշխարհային փորձի և սեփական կեցության առանձնահատկությունների համատեղման միջոցով: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ արդի գլոբալիզացիայի պայմաններում «ազգայինի համար կազմավորվում է կեցության գոյատևման նոր միջավայր, հենց նույն ազգայինի պահպանման ու զարգացման համար մրրցունակության ու մարտունակության կազմավորման նոր, առավել խստապահանջ ասպարեզ»:

Հայ ժողովրդի գործունեական մյուս կարևոր առանձնահատկությունը, ինչպես արդեն նշվել է, ձեռներեցությունն է: Վարդոց ի վեր գգալով, որ ինքը չունի ուրիշներին ֆիզիկապես նվաճելու և տիրելու հնարավորություններ (հիշենք Պատմահոր դիպուկ ձևակերպումը՝ «ա՛ծու փորք»), հայ ժողովուրդը ջանացել է այդ բացը լրացնել՝ շրջապատող աշխարհը ենթարկել հոգևոր ու գործունեական նվաճման: Այստեղից էլ՝ նրա ձեռներեցությունն ու գործունեական ակտիվությունը: Նվաճման այս ձևը ավելի հիմնավոր է, քան ֆիզիկական տիրապետումը, քանի որ գործունեական ակտիվության շնորհիվ հայ ժողովուրդը առարկայնացված աշխարհին տալիս է իր կերպը: Իրականության հայկական կերպարանավորումը էթնոմշակութային ու տնտեսական-տեխնոլոգիական այն անգնահատելի կապիտալն է, որի շնորհիվ հայ մարդու անհատական գոյատևումը չի կորցնում իր ազգային ինքնությունը:

Փորձենք հայ ազգային գաղափարախոսության կրող սոցիալական հենքի գործունեական նշված երկու առանձնահատկությունների (ազգային համերաշխություն և անհատական ձեռներեցություն) հիման վրա քննարկել Հայաստանում ընթացող տրանսֆորմացիոն գործընթացների քաղաքական ու սոցիալ-հոգեբանական որոշ միտումներ:

Տրանսֆորմացիոն փուլ մտած գրեթե բոլոր նախկին համայնավարական երկրների քաղաքական կյանքում հիմնական պայքարն ընթանում է ձախ-կենտրոնամետ ու աջ-կենտրոնամետ ուժերի միջև: Այդ պայքարում մշտապես «խաղարկվում է» այն ծանր վիճա-

⁵ Տե՛ս Գ. Վ. Օսիպով, Россия: Национальная идея и социальная стратегия. - Вопросы философии, 1997, N10, էջ 5-9:

⁶ Տե՛ս Հր. Գ. Շարաբյան, Կեցության էությունը և տիպարանությունը, Երևան, 1997, էջ 25-26:

կը, որի մեջ հայտնվել է ազգաբնակչության մեծամասնությունը: Որպես կանոն, քաղաքական կոնֆլիկտները կառուցվում են երեք հիմնական գործոնների վրա:

Առաջին՝ արմատական բարեփոխումների հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական դժվարությունների հարուցած ժողովրդական դժգոհությունների վրա՝ որպես կանոն շահարկելով անցյալի կարոտախտի հոգեբանական երևույթը:

Երկրորդ՝ ազգայնական ու անրազգային գաղափարախոսությունների հակադրության վրա՝ որպես կանոն ազգային զարթոնքի ընդհանուր ֆոնի վրա շահարկելով ազգային արժանապատվության հոգեբանական երևույթը:

Երրորդ՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում պետական վերահսկողության գերակայության դերի վրա՝ որպես կանոն շահարկելով սոցիալական դերաբաշխման պետական համակարգի հարուցած հուսալիության հոգեբանական երևույթը:

Ի դեպ, այս երևույթի վրա քիչ ուշադրություն է դարձվում, բայց չպետք է անտեսել այն փաստը, որ ետհամայնավարական գրեթե բոլոր հանրապետություններում ներանձնային լուրջ պայքար է ընթանում այսօրվա «ազատ քաղաքացու» և երեկվա «պետական քաղաքացու» կարգավիճակների միջև: Ետհամայնավարական հանրապետությունների ազգաբնակչության մեծամասնությունը ձևականորեն ու հանգամանքների հարկադրանքով ընդունել է «ազատ քաղաքացու» կարգավիճակ, բայց աշխարհայացքով ու արժեքային կողմնորոշումներով մնացել է «պետական քաղաքացի» և տակավին իր անձնական կյանքն ու գործունեությունը փորձում է վարել պետականորեն երաշխավորված նվազագույն պաշտպանվածության շրջանակներում:

Նշված երեք հիմնական գործոնները այս կամ այն չափով առկա են նաև Հայաստանի երրորդ հանրապետությունում: Այս հանգամանքից ելնելով կարելի է եզրակացնել, որ Հայաստանի ներքաղաքական կյանքի սցենարը (բեմադրությունը) ևս կանխորոշված է: Բայց իրականում դա այդքան էլ այդպես չէ: Խնդիրն այն է, որ նշված իրավիճակները, անցնելով հայ ժողովրդի գործունակության յուրատիպ ոսպնյակի միջով, այլ երանգ և ուղղվածություն են ստանում:

Ինչպես արդեն նշվեց, ետհամայնավարական մի շարք հանրապետություններում ձախ-կենտրոնամետ կողմնորոշումների հետագա խորացման պատճառներից մեկը տրանսֆորմացիոն փուլի հարուցած «անցյալի կարոտախտն է», որի հարուցիչը անցյալում «պետական քաղաքացու» երաշխավորված նվազագույն պաշտպանվածությունն էր: Թվում է, թե Հայաստանում, ուր պետական կառույցները առարկայական ու ենթակայական ինչ-ինչ պատճառներով տեսադաշտից գրեթե դուրս են թողել ազգաբնակչության հիմնական խավերի «երաշխավորված նվազագույն պաշտպանվածությունը», ժողովուրդը ինքնաբերաբար կդառնա ձախ-կենտրոնամետ կողմնորոշումների սոցիալական հենքը: Ատերևույթ այդպես է: Սոցիալական հիմնական շերտերի ու խավերի գնահատականներն ու վերաբերմունքը հոգեբանորեն կողմնորոշված է: Գործում է անցյալի իդեալականացման հայտնի հոգեբանական երևույթը: Ընդամենը, որքան անցյալին վերադառնալու հավանականությունը նվազում է, նույնքան մեծանում են անցյալը իդեալականացնելու հակումները:

Նկատենք միայն, որ խորհրդային շրջանի մարդը ևս ապրում էր յուրօրինակ երկվություն: Նա ատերևույթ սոցիալիստական «պետական քաղաքացու» կողմնորոշում ուներ, իսկ անձնական կյանքում փորձում էր ապրել «ազատ քաղաքացու» գաղափարախոսությամբ⁷:

«Պետական քաղաքացու» կարոտախտը հոգեբանական երևույթ է: Հիրականացված ակնկալիքների, տրանսֆորմացիոն գործընթացների լուր վերացական ընկալման, նաև անխուսափելի դժվարությունների ազդեցության տակ մարդը իր գոյի արժեքումը այլևս չի կապում իրականության հետ: Սրա պատճառը նաև այն է, որ հասարակության կայուն և գործառության հստակություն ունեցող հարաբերությունների սովոր անհատը մեկն հայտնում էր քաղաքական ու գաղափարական խառնաշփոթի մեջ, ուր ամեն ինչ թողնված է անհատի հոգեբանական կարգավորիչներին: Անիշխանության, հասարակական հարաբերությունների կարգավորման մեջ պետական ներազդեցության բացակայության պայմաններում անխուսափելիորեն մեծանում է հասարակության ու անհատի միջև ընկած տարածությունը, խորանում հակասությունը, և անցյալը դառնում է յուրօրինակ «փրկիչ»: Ամեն անգամ, երբ սոցիալ-հոգեբանական լարվածությունն ու անորոշությունը համակարգի համար դառնում են խրոնիկական հիվանդություն, անխուսափելիորեն ծագում է «փրկիչի» պահանջմունք⁸: Մի դեպքում այն կարող է լինել «ուժեղ ձեռքը», մեկ այլ դեպքում՝ անցյալը և այն ներկայացնող գործիչն ու քաղաքական ուժը:

⁷ Տե՛ս Է. Մ. Бабосов. Катастрофы как объект социологического анализа. - Социологические исследования, 1998, № 9, էջ 23-24:

⁸ Տե՛ս Психология политики. Политические и социальные идеи Карла Густав Юнга. Санкт-Петербург. 1996, էջ 141:

Ինչ խոսք, ցանկալին այն կլինեք, որ քաղաքական ու սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիաների հենց սկզբից դրվեր ազգային կյանքի քաղաքական կազմակերպման ավանդույթը և հայ քաղաքացին իրեն զգար հայ պետական քաղաքացի: Երրորդ համրապետության ձևավորման առաջին շրջանում հայ ժողովուրդը «պետական քաղաքացի» դառնալու ազգային բարձր ինքնագիտակցություն դրսևորեց՝ պատրաստ դիմակայելու արտաքին ու ներքին առարկայական դժվարություններին: Նրա այդ գոհողության շարժառիթն առաջին հերթին ոչ թե պետությունից հայ քաղաքացու նյութական ու իրավական կախվածությունն էր, այլ ազգային պետականության կայացման հանդեպ պատասխանատու կախվածությունը: Այդ երևույթը կարող էր դառնալ համազգային քաղաքական որակ, եթե համարժեք պատասխանատու կախվածության վերաբերմունք դրսևորեր նաև պետությունը: Բայց հետադարձ կապ չստեղծվեց, և շատեղծվեցին փոխադարձաբար պատասխանատու կախվածության հարաբերություններ:

Նման իրավիճակում հայտնված հասարակության մեծամասնության առջև երկու ելք կար: Առաջին՝ հարկադրել պետությանը, որպեսզի կատարի իր հիմնական գործառնություններից մեկը՝ ազգային կյանքի գործառնություն, վերարտադրության ու զարգացման գործը: Երկրորդ՝ կենսական խնդիրների այդ համալիր ծրագրի իրագործումը մտցնել իրենց անհատական գոյատևման գործունեական համակարգի մեջ: Ըստ էության հայ ժողովուրդը «նախընտրեց» երկրորդ ուղին:

Անշուշտ, այդ «նախընտրանքը» հարկադրական բնույթ ուներ, բայց խորքում այդ ուղին հարազատ էր հայ մարդու գործունեական առանձնահատկություններին: Համազգային կենսական խնդիրների լուծման ոչ պետական գործունեական եղանակի «հաղթանակը» պայմանավորված էր մի շարք պատճառներով:

Առաջին՝ հանգամանքների բերուժով նորաստեղծ հայոց ազգային պետության առջև ծառայած էր շատ ավելի կարևոր ազգային գերխնդիր, քան ներազգային կենսական խնդիրներն էին: Խոսքը ազգային-ազատագրական պատերազմի մասին է: Քաջ գիտակցելով, որ այդ պատերազմում դրված է հայ ժողովրդի լինել-չլինելու, ապրելու իրավունքի պաշտպանության հարցը՝ հայ ժողովուրդը պետությանը մասամբ «ազատեց» իր կենսական խնդիրներով զբաղվելու հոգսից՝ ակնկալելով, որ պետության մվազագույն կենսական երակները կծառայեն ազգային-ազատագրական գերխնդրին: Այս տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի իշխանությունների հանդեպ հայ ժողովրդի հանդուրժողականությունը: Որպես կանոն, ժողովուրդը համբերատար ու հանդուրժող է, եթե, անկախ դժվարություններից, հավատում է իշխանություններին, վիճակի առարկայական պատճառների մասին ինֆորմացված է, և նրան բավարարում է երկրում իշխող սոցիալական արդարության մակարդակը: Ինչպես մշեցիքը, Հայաստանի պարագայում հանդուրժողականության դերդասպատճառները, գոնե տրանսֆորմացիայի առաջին փուլում, այլ էին:

Ի դեպ, ազգային-ազատագրական գերխնդիրը հայ ժողովրդի համար այնքան մշտական է եղել, որ ամեն ամգամ ներազգային կենսական խնդիրների լուծման հոգսը ժողովրդական դարձնելը ներկայացել է ինքնին ենթադրելի համազգային մտածելակերպ: Բայց պետք է նկատել նաև, որ անձնական գոհողությունները, որոշակի մարդկային հոգսը համազգային բեռ չդարձնելու քաղաքական ու բարոյական որակը շատ հաճախ դառնում են իշխանությունների ներպետական անգործունեության, ներազգային խնդիրների նկատմամբ պատասխանատվությունից խուսափելու արդարացման միջոց:

Երկրորդ՝ հենց այն պատճառով, որ ազգային-ազատագրական գերխնդիրը ներազգային կենսական խնդիրների նկատմամբ գերակայական կարգավիճակ է ունեցել, հայ ժողովուրդը, հասկանալի պատճառներով, ազգային կյանքի քաղաքական կազմակերպման իրավական սկզբունքների փոխարեն ավելի շատ ղեկավարվել է ժողովրդական սովորույթներով ու ավանդույթներով: Այն փաստը, որ տրանսֆորմացիայի փուլում հայ «պետական քաղաքացին» շատ ավելի արագ ու բնականոն մտավ «ազատ քաղաքացու» դերի մեջ, մեկ անգամ և ս վկայում է, որ տրանսֆորմացիայի սկզբնական փուլում ազգային անկախ պետականության ժողովրդական պատկերացումների մեջ գերիշխում էր ազգային-ազատագրական գերխնդրի լուծման ակնկալիքը:

Նրորդ՝ պետության և նրա քաղաքացիների միջև ստեղծված առկա հարաբերությունների և գործառնությունների նման դերաբաշխման գործում պակաս կարևոր չէին նաև «ազատության էթիկայի» հայկական-ժողովրդական ինքնատիպ պատկերացումները: Անցումային փուլի առկա փորձը մեկ անգամ և ս հաստատեց, որ հայ ժողովրդի մեծամասնությունը իր քաղաքական իրավունքների ու ազատությունների մասին ունի «ինքնատիպ» պատկեր-

՝ Տե՛ս В. М. Соколов. Нравственные коллизии современного российского общества (социологический анализ). - Социологические исследования, 1993, N 9, էջ 47:

րացումներ: Պետականորեն կազմակերպվածության փորձի պակասը բացասաբար է անդրադարձել պետության հանդեպ պահանջատիրական մտածելակերպի ձևավորման վրա: Համակարգի քաղաքական փոփոխությունները տվեցին մտածողության ազատություն, բայց ոչ ազատ մտածողություն: Կարելի է մատնանշել այլ պատճառներ ևս, բայց փաստն այն է, որ անկախ պետականության ձևավորումից հետո մեզանում հասարակական հարաբերությունների գործառնությունը մնաց իբրև տարերայնորեն ինքնակարգավորվող համակարգի գործառույթ՝ այդպես էլ չդառնալով պետական դոմինանտ (տիրական) քաղաքականություն: Տեղին է նկատել նաև, որ ետխորհրդային տրանսֆորմացիոն հասարակությունները, բացառությամբ հավանաբար մերժբայթյան հանրապետությունների, չունեն ազգային համակարգերին բնորոշ ընդհանուր կուլտուրա, «կոլեկտիվ վարք» ու համատեղ վարքի կանոններ:

Պետականորեն կարգավորվող ներազգային կյանքի փոխարեն Հայաստանում ներքևից եկող մի նախաձեռնությամբ հաստատվեց «ժողովրդական դաշինքով» կարգավորվող ներազգային կյանք: Այդ տեսակետից, եթե ետխորհրդային շատ հանրապետություններում հասարակության սոցիալական դերաբաշխման նախկին համակարգի վերականգնման և բնակչության պետական երաշխավորված նվազագույն ապահովության կարողությունը այդ ժողովրդի «պետական քաղաքացու» մտածողության արգասիք է, ապա հայ ժողովրդի պարագայում կարողատիսը ոչ այնքան բառացիորեն անցյալին վերադառնալու ցանկության արդյունք է, որքան գործող պետական համակարգը սոցիալական պետություն տեսնելու պահանջի արտահայտման ձև: Բանն այն է, որ համակարգային փոփոխությունների շրջանում երկար ժամանակ պետականորեն կարգավորվելու փոխարեն ապրելով «պետականորեն հաստատված» սոցիալ-տնտեսական քառույթ, ուր չէին գործում նաև կարգավորման իրավական ու բարոյական մեխանիզմները, մարդիկ հարկադրված, ներքին տարերային պայմանավորվածությամբ ստիպված ապավինեցին գոյատևման ինքնագործունեության ու ինքնակարգավորման ոչ պետական մեխանիզմներին և ստեղծեցին ներազգային կյանքի կազմակերպման ու կարգավորման «ժողովրդական դաշինք»: Երկրի ներքին կյանքը կազմակերպելու պետության կարևոր գործառույթը ժողովուրդը հարկադրված վերցրեց իր վրա, ապահովեց քաղաքացիական հասարակությանը բնորոշ կայունությունը՝ այլևս չհավանալով պետականորեն վերահսկելի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերականգնման քաղաքական խոստումներին: Փաստորեն համակարգային փոփոխություններում առկա սխալներն ու բացթողումները երկատեղ հայ ժողովրդի իրավական գիտակցությունը: Այն միաժամանակ և անմեղսունակ է, և մեղսունակ: Անմեղսունակ-մեղսունակության այդ իրավիճակը, որի մեջ ներքաշվեցին սոցիալական տարբեր խավերն ու շերտերը, խարխլեց ժողովրդի սոցիալական արդարության բարոյական հիմքերը: Այստեղից էլ նրա հակասական վարքը: Նա չէր պարտավորվում քաղաքացիական հասարակության և իրավական պետության գաղափարախոսությանը, բայց աղընթեր կյանքում գործում է իրեն պարտադրված թողության մեղսունակ գործնապաշտությամբ:

Ներազգային կյանքի ոչ պետական կանոնակարգման «ժողովրդական դաշինքի» ձևը սոցիալ-տնտեսական կյանքի գործառնության ուղղակիության հաստատման հարկադրական քայլ էր:

Հայոց նորաստեղծ երրորդ հանրապետությունը, բնականաբար, պիտի անցներ նախկին սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգի արմատական վերափոխման ուղին: Այլ հարց է, որ անխուսափելի տրանսֆորմացիաների ընթացքում անցյալի մետաֆիզիկական բացասման ծրագիրը չուներ նորի կառուցման հստակ պատկերացում և համարժեք ծրագիր: Հայաստանի իշխանություններն ընտրեցին արմատական մակրոհեղափոխության ուղին՝ միաժամանակ թերազնահատելով սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի գործառնության ուղղակիության դերը նոր ձևավորվող պետության օպտիմալ գործառնության մեջ:

Գործառնության ուղղակիությունը պետականության հիմքերի կազմավորման, նրա առանձին տարրերի փոխհարաբերությունների գործառնության, վերարտադրության ու զարգացման այնպիսի եղանակ է, որի շնորհիվ պետականության տվյալ համակարգը սահմանագատվում է որպես որակական որոշակիություն: Պետության գործառնության ուղղակիությունն ամենից առաջ դրսևորվում է պետականության առանձին օղակներու գործունեության համակարգմամբ՝ զարգացման օրինաչափություններից ազգի քաղաքական կառույցի շեղման նվազագույնի պայմաններում առավելագույնի հասցնելով ծառայած խնդիրների լուծման համար առկա ջանքերը: Եվ քանի որ առարկայական ու ենթակայական բազմաթիվ պատճառներով հայոց երրորդ հանրապետությունը չհասցրեց ստեղծել համակարգված ներպետական հարաբերություններ, այն վտանգավոր արագությամբ ենթարկվեց սոցիալ-

տնտեսական ու քաղաքական ձևախեղման: Բանն այն է, որ անցումային այդ քառուսում, երբ նաև հասարակության սոցիալ-քաղաքական ընտրանին փորձում է իր արտոնությունները վերածել տնտեսական շահի, պետությունը պարտավոր է ապահովել խաղի ընդհանուր կանոններ: Երբ պետությունը մոռացության է տալիս իր այդ պարտականությունը, ապա անխուսափելիորեն ձևավորվում են «անտեսանելի ինստիտուտներ», որոնք ընթացող պրոցեսների կարգավորման գործառույթը վերցնում են իրենց ձեռքը: Արդյունքում, որպես կանոն, ձևավորվում է ստվերային տնտեսություն և ստվերային իշխանություն¹⁰:

Սա, անշուշտ, նաև կառավարման պարզունակ պատկերացումների հետևանք էր: Կյանքի բոլոր ոլորտների պետական վերահսկողության ու կարգավորման այդ գործառույթը, որը ներքնապես հատուկ է ցանկացած քաղաքական կազմակերպումին, կարելի է բնութագրել որպես հասարակության առանձին ոլորտների սոցիալ-տնտեսական ու **քաղաքական վարքի համակարգային դեռեքնինացիայի (որոշայնադրության) օրինք**: Այլ կերպ ասած, պետական կառույցը պետք է գործառնի որպես օրգանապես միացված ենթակառուցների ամբողջություն: Այդ ենթակառույցներից յուրաքանչյուրն իր ներքին տրամաբանությամբ համապատասխան մասնակցում է պետության միասնական վարքի «կողավորմանը»: «Ազգը, իբրև կազմակերպված կառույցների համակարգ և ինքն իրեն մշտականաճալու ձգտող տեսակ, ունի իր ուրույն տրամաբանությունը, որ ազգի քաղկացուցիչ մասերին թելադրում է հստակ վարվելակերպ»¹¹:

Միաժամանակ, արդեն գործանող պետական համակարգը ձեռք է բերում գոյության այնպիսի ներքին տրամաբանություն, որը ոչ միայն ենթակա չէ ենթակառույցներից յուրաքանչյուրի տրամաբանությամբ, այլև վեր է նրանից: Առանձին մարդկանց և սոցիալական խավերի գործունեությունը ենթարկելով իր նպատակներին ու խնդիրներին, սահմանափակելով նրանց ազատություններն ու տիրապետության ոլորտները՝ պետությունը ձեռք է բերում լրացուցիչ գործառնական էֆեկտ: Պետության ներքին հիմնական խնդիրներից մեկը երևց հասարակության առանձին ոլորտների, առանձին սոցիալական սուբյեկտների միջև գործառութային որոշակիության հաստատումն է և նրանց միջև գործառութային կախվածության օրինականացումը: Սա ոչ միայն հասարակական կյանքի արդյունավետ կարգավորման, այլև անկախ պետականության գործնական փաստման ուղին է:

Բայց, ինչպես արդեն նշվեց, Հայաստանի երրորդ հանրապետությանը ամենից շատ պակասում է ներպետական ենթակառույցների գործառութային որոշակիությունն ու նրանց միջև գործառութային կախվածությունը: Գաղտնիք չէ, որ այն, ինչ այսօր բնութագրվում է որպես «թավշյա հեղափոխություն», իր բնույթով մակրոհեղափոխություն էր: Այն նպատակասլաց կերպով լուծելով ամեն մի համանման հեղափոխության առջև դրված հիմնական հարցը՝ իշխանության հարցը, հետագա գործողություններում կորցրեց իր նպատակասլացությունը՝ տրվելով իրադարձությունների թելադրանքին ու հասարակական կյանքի մետաֆիզիկական բացասման տարերքին: Մինչդեռ բուն հեղափոխությունը պետք է սկսվեր «իշխանության հարցը» լուծելուց հետո: Նման ճանապարհով է նոր իշխանությունների ու նոր պետականության շուրջ ստեղծվում ժողովրդական պաշտպանության մնայուն և հավատարիմ սոցիալական հենարան: Հակառակ դեպքում անխուսափելի է դառնում իշխանության և ժողովրդի, պետության և ժողովրդի փոխադարձ օտարվածությունը:

Ժամանակակից աշխարհում ուրվագծվում են պետության ու իշխանության ճգնաժամների մի շարք համընդհանուր պատճառներ, որոնք ավելի ցայտուն են արտահայտվում հատկապես տրանսֆորմացիոն հասարակություններում: Ժամանակակից քաղաքական կյանքում իշխանության համար մղվող պայքարի զինանոցում շռայլ խոստումներ տալը համընդհանուր երևույթ է: Այդ խոստումների քաղաքականությունն առանձնապես ցանկալի արդյունք է տալիս արմատական տրանսֆորմացիաների շրջանում, երբ ստեղծված գաղափարաքաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամից դուրս գալու, անցյալի կապերներից ազատագրվելու մարդու անօտարելի պահանջումը սոցիալական հիմնական խավերին ու շերտերին մղում է դեպի այն քաղաքական ուժերը, որոնք արմատական կեցության բարելավման մեծ խոստումներ են տալիս: Բայց հարաբերականորեն կայուն իրավիճակներում, երբ հասարակության առջև դրված են ամենօրյա սոցիալ-տնտեսական խնդիրներ, խոստումների քաղաքականությունն այլևս ողջվարության մեջ զանգվածներ գրավում, քանի որ գրեթե բոլոր քաղաքական ուժերն էլ նույն խոստումներն են տալիս՝ նույն չափով թողնելով անիրագործելի:

20-րդ դարի քաղաքացիական հասարակությունների փորձը վկայում է, որ գրեթե բոլոր երկրներում իշխանության համար մղվող պայքարում ազգաբնակչությունը կորցրել է հավա-

¹⁰ Տե՛ս **K. Azrow**, *The Limits of Organization*. N. Y., 1974, էջ 84:

¹¹ Վ. Հ. **Փառիազյան**, Հայ ազգային ուսման պարտությունը, Երևան, 1993, էջ 10:

տը իշխանության ձգտող քաղաքական ուժերի նկատմամբ: Նման հոգեբանական վիճակ ստեղծվել է նաև Հայաստանում: Քաղաքական ուժերի նկատմամբ անվստահության այդ համընդհանուր միտումը, ի վերջո, անվստահություն է ծնում նաև կառավարությունների նկատմամբ: Ազգերի քաղաքական կազմակերպումները տնտեսական ու քաղաքական կյանքի միջազգայնացման պատճառով ավելի շատ զբաղված են արտաքին քաղաքականության հարցերով, որոնց ելակետը, ի վերջո, տրանսնացիոնալ (անդրազգային) շահերն են: Իսկ այդ շահերը միշտ չէ, որ ընկալվում են բնակչության միջին շերտերի կողմից: Առավել ևս, որ ոչ բոլոր պետություններին է հաջողվում տրանսնացիոնալ շահերը ծառայեցնել իրենց ազգային շահերին: Պետության և ժողովրդի միջև փոխադարձ օտարվածությունը վերացնելու, ազգաբնակչության վստահությունը վերականգնելու համար ժամանակակից կառավարությունները կանգնած են գործառնությունների ֆունդամենտալ վերանայման, ազգային գաղափարախոսության չափանիշներով **ներկառավարական զտման** անհրաժեշտության առջև:

Պետության և ժողովրդի փոխադարձ օտարվածության պատճառներից մյուսն էլ ժողովրդավարության ժամանակակից տիրապետող ձևականացված ըմբռնումն է: Ազատության (քաղաքական, տնտեսական ու հոգևոր) և մարդու իրավունքների գաղափարները ժամանակին ավատատիրության հիմքերը քանդելու գաղափարական հզոր զենք էին և ծառայեցին իրենց նպատակին: Սակայն քաղաքական իրադարձությունների հետագա պատմությունը ցույց տվեց, որ ժողովրդավարության հանրահայտ արժեքներն ավելի հաճախ արտահայտում են քաղաքակրթության զարգացման տեսական մակարդակը, քան աղընթեր կյանքի ռեալ վիճակը: Բացի այդ, ժամանակակից քաղաքական աշխարհում ժողովրդավարության հանրահայտ սկզբունքները, զրկվելով պատմական որոշակիությունից ու ազգային առանձնահատկություններից, որպես համաշխարհային պրեկակերպ ու գաղափարախոսություն՝ գերտերությունների կողմից ծառայեցվում են անդրազգային շահերի:

Սոցիալական արդարության ու ազատության գաղափարները գրեթե բոլոր հեղափոխությունների բացահայտ կամ թաքցված ակնկալիքն են: Քաղաքական մեծ բեկումների ժամանակ, երբ շոշափվում են կենսաձևերի հերթափոխման հարցեր, նոր ուժերը, անկախ իրենց քաղաքական կողմնորոշումներից ու նպատակներից, որդեգրում են մարդկանց մեծամասնության համար հոգեհարազատ ու հասկանալի՝ ազատության ու արդարության գաղափարներ: Սակայն միշտ չէ, որ ազատության ու արդարության գաղափարներով զանգվածներին ոտքի հանող քաղաքական ուժերը իշխանությունը նվաճելուց հետո կատարում են իրենց խոստումները: Այդպիսին է քաղաքական հեղափոխությունների բարոյականությունը:

Եվ այսպես, ազգային-ազատագրական պայքարի հարուցած դժվարությունները, հին կենսաձևը նորով փոխարինելու անցումային շրջանում կառավարման համակարգի գործառնության որոշակիության ձևափոխումը, պետության և հասարակության փոխադարձ օտարվածության համընդհանուր ճգնաժամը, ինչպես նաև Հայաստանի իշխանությունների գործունեության ելակետային ու ենթակայական բազմաթիվ սխալները կազմեցին պատճառների այն ամբողջ համակարգը, որն անհրազորժելի դարձրեց հասարակության առանձին ոլորտների սոցիալ-տնտեսական ու քաղաքական վարքի պետական-համակարգային դետերմինացիայի օրենքի կիրառումը:

1988-ի մակրոհեղափոխությունը լուծեց իշխանության հարցը, փոխեց հասարակության զարգացման ընթացքը՝ այդպես էլ շարժման մեջ չառնելով ազգի մեծամասնության սոցիալական շահերը: Չզալով, որ վարքի պետական դետերմինացիայի օրենքը չի գործում, մարդիկ իրենց նախաձեռնությամբ և անհատական գոյատևման կենսափորձով սկսեցին կյանքի բնականոնացման ներքևից վերև ընթացող մի շարժում՝ դրանով իսկ գործողության մեջ դնելով **պետության վարքի կառուցվածքային դետերմինացիայի օրենքը**: Տեղի ունեցավ սոցիալական կյանքի միկրոհեղափոխություն, որն աստիճանաբար կայունացնելով սոցիալական կյանքը, իրենով սկսեց բնութագրել երրորդ հանրապետության ընդհանուր գործառնական վիճակը: Հայաստանում սոցիալական կայունության նախաձեռնությունը ժողովրդին էր: Ազգային գաղափարախոսության ժողովրդական ըմբռնումը խարսխված է ներքին կայունության ժողովրդական դաշինքի վրա: Եվ հազիվ թե որևէ քաղաքական ուժի հաջողվի խախտել այն: Հայաստանում այսօր էլ հնարավոր են զանազան պալատական հեղաշրջումներ, հնարավոր են ֆասադային հեղափոխություններ, որոնց հետևանքով կարող է փոխվել պետության քաղաքական ուղղվածությունը, բայց պալատական ու ֆասադային այդ փոփոխությունները, ի վերջո, հարմարվելու են սոցիալական կյանքի կարգավորման ժողովրդական դաշինքի սկզբունքին:

Այդ սկզբունքը կարելի է անվանել սոցիալ-տնտեսական **ապակենտրոնության սկզբունք**: Այն ձևավորվել է դարերի ընթացքում և բխում է գոյատևման հայկական կենսափոխություն-

քյան ակունքներից: Մի կողմից՝ չունենալով սոցիալ-տնտեսական ապահովությունը երաշխավորող մակրոքաղաքական կազմակերպում, հայ ժողովուրդը դարերի ընթացքում հարկադրաբար ընտրել է գոյատևման «միկրոպետությունների» ձևը: Դա «ազատ քաղաքացու» կենսափոխարկություն է: Այդ «միկրոպետություններից» յուրաքանչյուրը վարչական, աշխարհագրական, ազգակցական, հաճախ նաև մասնագիտական հիմքի վրա բարձրացող մի կառույց է, որը ընդհանուր լեզվի, դավանանքի ու պատմական հիշողության հայկական սոցիոմշակութային դաշտում ղրկադրվում է բազում բարբառների, տեղական սովորույթների ու պատումների ձևով, տարբեր գերիսնդիքներով ու գոյատևման առընթեր հոգսերով: Մյուս կողմից՝ գոյատևման «միկրոպետությունների» ձևը հարազատ է հայ մարդու գործունեական անհատական ոգուն: Ահա թե ինչու հայ ժողովրդի գոյատևման կենսափոխարկության մեջ հասարակության սոցիալական կյանքը ոչ այնքան դեկավարվել է սոցիալ-դասակարգային կառուցվածքի օրինաչափություններով, որքան միկրոաշխարհների գոյատևման սոցիալական ապակենտրոնության սկզբունքով: Բնականաբար, սոցիալական այդ «միկրոպետություններից» յուրաքանչյուրն ունեցել է քաղաքական կազմակերպման ոչ պետական մեխանիզմներ (համայնքների խորհուրդ, եկեղեցի և այլն), որոնք կառավարելի են դարձրել ազգային ողջ համակարգը:

Երկրորդ հանրապետության տարիներին (Խորհրդային Հայաստան) մակրոպետության խորհրդային ձևը, շնորհիվ կառավարման կենտրոնացված համակարգի և գաղափարական մեմիչիսանության, էսպես սահմանափակեց սոցիալականապես ապակենտրոն հայկական «միկրոպետությունների» շրջանակներն ու գործառույթները: Թվում էր, թե ազգային պետականությունս սկիզբն ակետուր երրորդ հանրապետությունը, գաղափարական նոր հենքի վրա, էլ ավելի կնպաստի հայկական «մակրոպետության» սոցիալ-տնտեսական, հոգևոր ու քաղաքական միասնականությանը: Սակայն, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով անհատական գոյատևման «ազատ քաղաքացու» կենսափոխարկությունը կրկին դարձավ համազգային առընթեր հոգսի լուծման դոմինանտ եղանակը:

Համայնավարական տրանսնացիոնալ, բայց և մենիչիսան գաղափարախոսության համընդհանուր կապանքներից ազատագրված հասարակությունը մեկեն հայտնվեց բազմաթիվ ու իրարամերժ, տրանսնացիոնալ ու ազգային, պրագմատիկ ու ոռմանտիկ գաղափարախոսությունների պայքարի կիզակետում: Այդ ամենի հետևանքով սկսվեց հասարակության վերնախավի գաղափարական բնեռացումն ու գաղափարական «միկրոպետությունների» ձևակերպումը, որոնք այդպես էլ մնացին ընտրանիի (էլիտայի) գաղափարական «միկրոպետություններ», քանի որ առընթեր հոգսի մեջ թաղված ժողովուրդը որոշ ժամանակ անց նախընտրեց այդ պայքարը կողքից դիտողի կարգավիճակը: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ անտարբեր էր ազգային պատմական հեռանկարի հանդեպ, այլ որ դրա մեջ չտեսավ իր առընթեր հոգսի լուծման բանալին:

Ժողովրդի առընթեր հոգսից օտարված և ընտրանի խավերի «իշխանության հարցին» ծառայեցված գաղափարախոսական սկզբունքները այդպես էլ չդարձան ազգի գաղափարական բյուրեղացման հիմունքները: Ավելին, հենց այն պատճառով, որ այդ սկզբունքները մնացին սոսկ քաղաքական ընտրանիի գործունեության մենաշնորհը, սոցիալական կյանքում չառարկայացան և չդարձան սոցիալական լայն խավերի շահերն արտահայտող գործունեության սկզբունքներ: Ըստ էության իշխանությունները պետականության կազմակերպման իրենց գործառույթը հանգեցրին քաղաքական ընտրանիի քաղաքական կազմակերպման գործառույթին՝ դարձյալ դեկավարվելով «ազատ քաղաքացու» ապակենտրոն կենսափոխարկությամբ: Բանն այն է, որ Հայաստանում սոցիալական խավերի կապն ու փոխհարաբերությունն ապահովող միասնական տնտեսական կյանքի կազմաբաժանը անհնարին դարձրեց նաև սոցիալական խավերի ու շերտերի միասնական գաղափարախոսական դաշտի ստեղծումը: Սոցիալ-տնտեսական ապակենտրոն կյանքը ինքնին ենթադրում է գոյատևման անհատական ու խմբային կենսափոխարկության գերիշխանություն: «Միկրոպետության» հայկական արդի կենսաձևը, բնականաբար, ենթադրում էր ժողովրդավարության հայտնի ու տարածված սկզբունքների որոշակի փոփոխություն: Չներժելով համազգային պետության դերը, բայց և չտեսնելով նրա արդյունավետ գործունեությունը՝ հայ ժողովուրդը գնաց «ազատ քաղաքացու» և «պետական քաղաքացու» համատեղման՝ «միկրոպետություն» ստեղծման ճանապարհով: Ընդունելով արդի քաղաքակրթության ժողովրդավարական սկզբունքները, բայց չտեսնելով իր իրավունքները պետականորեն պաշտպանելու հետևողականություն՝ հայ ժողովուրդը, ինքնապահպանման բնական մղումներով, Հայաստանում մարդու իրավունքների սկզբունքը ձևակերպեց որպես անձի իրավունքների սկզբունք: Մինչդեռ՝ «Տեսականորեն առաջարկվել էր «սոցիալական պարտնյորության» մոդելը, որտեղ պետությունը ենթադրում էր տնտեսական ոլորտը թողնել մասնավոր հատվածին, սոցիալականը՝

քաղաքացիական հասարակությանը, իսկ իր վրա վերցնել իրավաբանականության ու պաշտպանության հարցերի լուծումները»¹²:

Դարասկզբի հայ ազգային կուսակցությունների գաղափարախոսությունն ազգային-հեղափոխական էր: Դա **անվերջ փորձության գաղափար** դուրս գալու իրատես կոնահում էր, որովհետև գտնվել էր հեղափոխության հայկական ուղին. անհրաժեշտ էր արմատական հեղափոխություն անել օտարներին հպատակ և աշխարհաքաղաքական դատապարտվածությամբ ապրող մարդկանց մտածողության և հոգեբանության մեջ, համոզել ու հավատացնել, որ հայ ժողովուրդը և սկարող է պաշտպանել իր շահերը, ունենալ իր պետությունը և քաղաքականապես պաշտպանվելու միջոցով ստեղծել հայկական քաղաքացիական հասարակություն: Դա հայրենիքը հպարտորեն իր մեջ կրող «ազատ քաղաքացուն» հեղափոխելու փորձ էր՝ հայրենիքում հպարտորեն ապրող «պետական քաղաքացի» ձևավորելու միջոցով: Բայց հանգամանքների հերթական բերումով «ազատ քաղաքացու» և «պետական քաղաքացու» երկընտրանքի լուծման այդ գաղափարախոսությունն այդպես էլ չդարձավ ռեալ քաղաքականություն, ավելի ճիշտ՝ այն իր առաքելությունն ավարտեց որպես ազգային գաղափարախոսություն, բայց ոչ որպես պետական քաղաքականություն:

Գաղափարախոսության «կյանքը» քաղաքականության մեջ է: Ցանկացած պետություն դադարում է գոյություն ունենալ, երբ նրա իշխանության սահմաններում դադարում է մարդկանց վարքի ու հարաբերությունների, ինչպես նաև ներպետական կյանքի հիմնական ոլորտների գործունեության գաղափարական կարգավորումը: Դադարում է, քանի որ ստեղծվում է գաղափարական քառու ու անիշխանություն: Բայց պետությունը գործառնական ղեկ կարող է կատարել միայն այն դեպքում, երբ նրա գործունեության ծրագիրը և հարաբերությունների կարգավորման համակարգը մարդկի ընկալում են որպես իմաստալի համակարգ: Արդյո՞ք հասարակության կողմից բնական ու բանական դիտվեց հին անվերապահ մետաֆիզիկական բացատրումը: Հազիվ թե: Որովհետև քանդվեցին պետության և նյութական, և գործառնական հիմքերը: Նման անիշխանության ու թողտվության պայմաններում մարդկային հարաբերությունների կարգավորման, հասարակական կյանքի տարբեր ոլորտների վերարտադրության խնդիրը տարեդայնորեն դրվեց ազգային ավանդույթների ու սովորույթների վրա: Բայց հասարակական հարաբերությունների կարգավորման այդ ձևն այսօր կանգնած է մի շարք լուրջ դժվարությունների առաջ: Բանն այն է, որ ավանդույթներն ու սովորույթները որոշակի պայմանականություններ են, որոնք կենսունակ են միայն **համազգային հասարակական կարծիքի** դաշտում: Այս հարցում պակաս կարևոր նշանակություն չունի նաև մարդկանց սոցիալական կապվածության աստիճանը այս կամ այն սոցիալական խմբին ու խավին: Վերջին հանգամանքը կարևոր է այն իմաստով, որ սոցիալական կապվածությունը բնութագրում է համակարգին մարդկանց պատկանելիության չափը և, հետևաբար, այդ համակարգի պահանջների կատարման չափը: Ի դեպ, գրականության մեջ սոցիալական համակարգերը քննարկվում են հիմնականում որպես դերային հարաբերություններ, և քիչ ուշադրություն է դարձվում նորմատիվ համակարգերի վրա¹³: Հայաստանում, ինչպես ցանկացած տրանսֆորմացիոն հասարակությունում, սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունների հետևանքով թուլացել ու անկայուն է դարձել մարդկանց կապվածությունն ու պատկանելիությունը այս կամ այն սոցիալական խմբին ու, առավել և ս, քաղաքական ուղղություններին, սոցիալական անբնական շերտավորման հետևանքով առաջ են եկել «ինքնավար» ապրելակերպի առանձին ենթահամակարգեր, որոնց համար հասարակական կարծիքն այլևս չունի գործառնական նշանակություն: Այս տեսակետի՝ սոցիալական բազմաշերտությունը տրանսֆորմացիաների առաջին փուլում ստեղծեց այսպես կոչված «միկրոպետությունների» մի ամբողջ շարք: Դրանցից յուրաքանչյուրը իր համար ստեղծեց «ջենտլմենական պայմանավորվածության» ինքնավարություն և ղեկավարվում էր չգրված սահմանադրությամբ, չհաստատված «օրենքներով» ու տեղայնական հայրենասիրության կամ կլանային շահերի գաղափարախոսությամբ:

Նման իրավիճակներ անցումային հասարակություններում ստեղծվում են այն պատճառով և այն ժամանակ, երբ նորաստեղծ պետական համակարգը դեռևս չունի պատմական հեռանկարի գաղափարական հստակ հայեցակարգ և ազգային ու պետական կյանքի ներքին կազմակերպվածություն: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս տրանսֆորմացիոն հասարակությունների պատմական փորձը, անցումային փուլի դժվարությունների հաղթահարման և բաց-ժողովրդավարական հասարակության ստեղծման ճանապարհին, որպես միջանկյալ լուծում, անհրաժեշտ է կիրառել մորիտիզացիոն քաղաքականություն: Բանն այն է, որ ազգային ու պետական կյանքի

¹² Մարդկային զարգացման զեկույց: Հայաստան, 1999: Մարդկային զարգացման հինգ տարիները Հայաստանում: Երևան, 1999, էջ 57:

¹³ Տե՛ս **М. И. Бобнева**. Особенности нормативной регуляции поведения человека в организации. В кн.: Психологические механизмы регуляции социального поведения. М., 1979, էջ 47:

ներքին կազմակերպվածությունը, արտաքին ու ներքին վտանգները զգալու և կանխելու համակարգային ընկալունակությունը, ինչպես նաև հասարակության բարոյական ու գաղափարական հուսալիությունը պետականության արտաքին անվտանգության նախապայմաններ են: Միայն ներքին անվտանգության հուսալի նախադրյալներ ունեցող համակարգը կարող է օպտիմալ լուծել արտաքին անվտանգության խնդիրները:

Չմոռանանք, որ բոլոր այլ հաշվարկների հետ մեկտեղ, ետխորհրդային շրջանում Հայաստանի արտաքին քաղաքականության վրա տրանսնացիոնալ ազդեցությունների ենթատեսքատում, որպես հաջողության երաշխիք, օգտագործվել է այն ակնհայտ փաստը, որ ներքնապես կազմալուծված Հայաստանը և իր անձնական գոյատևման խնդրով զբաղված հայ ժողովուրդը կամա թե ակամա կհամակերպվեն արտաքին պարտադրանքներին: Այդ հաշվարկներն այսօր ևս ուժի մեջ են: Տարածաշրջանում Հայաստանի դերը կարևորող ու չկարևորող բոլոր կողմերն էլ մոտավոր պատկերացում ունեն, թե ինչ սահմաններում հայ ժողովուրդը լռելյայն կհամակերպվի իրեն պարտադրված ճակատագրին:

Յ. Ա. ԲՐՄԻՍԿԱՆ - **Национально - деятельностные особенности трансформационных процессов (ситуативный анализ).** - Учитывая то обстоятельство, что на постсоветском этапе системных трансформаций обществ на первый план выдвигается задача формирования независимых национально-государственных образований, при изучении объективной логики трансформационных процессов необходимо учитывать национально-идеологические особенности трансформационной логики каждого конкретного переходного общества. Заметим также, что системные перемены глубоко затрагивают интересы и социальный статус каждого отдельного человека. Это означает, что в ходе перестройки социальной системы происходит «национализация» и «индивидуализация» трансформационных задач. В этом отношении актуальность разработки философии национального существования армянского народа обусловлена тем, что армянская национальная и государственная системы до сих пор не определены и не уточнили меру и степень адаптивования к логике развития современной цивилизации и, следовательно, стоят перед проблемой укрепления внутренней надежности и идеологической определенности.